Ամփոփում եւ մեթոդաբանություն

Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդը (նախկինում՝ արտաքին հարաբերությունների Չիկագոյի խորհուրդ) 2006թ.-ին ԱՄՆ-ում, Չինաստանում եւ Հնդկաստանում նախաձեռնեց հասարակական կարծիքի լայնածավալ ուսումնասիրություն: Մի շարք այլ երկրների կազմակերպություններ այդ ուսումնասիրությանը մասնակցելու ցանկություն հայտնեցին: Նախաձեռնության ղեկավարումը ստանձնեց Համաշխարհային հասարակական կարծիք կազմակերպությունը, որն էլ լրացուցիչ երկրներ ներգրավեց, որպեսզի նրանք իրենց մասնակցությունը բերեն այս ծրագրին: Ի վերջո, հարցախույզն անցկացվեց աշխարհի 17 երկրներում ու Պաղեստինյան տարածքներում: Ստորեւ թվարկված են դրան մասնակցած երկրներն ու հետազոտական կազմակերպությունները: Ուսումնասիրությունը ներառում է աշխարհի բնակչության մոտ 55%-ը: Քանի որ աղբյուրները տարբերվում էին, ոչ բոլոր հարցերն են տրվել բոլոր երկրներում:

Ստորեւ նկարագրված են հարցման ընթացքում օգտագործված մեթոդաբանության մանրամասները: Բոլոր ընտրանքները եղել են պատահական. երկու երկրներում դրանք սահմանափակվել են միայն քաղաքային բնակավայրերով եւ, ինչպես արդեն նշվեց, որոշ երկրներում էլ ոչ բոլոր շրջաններն են ներառվել ընտրանքում:

Հետազոտական գործընկերներ

Երկիր	Հետազոտական հաստատություն	Քաղաք	Կապ
Արգենտինա	Գրասիելա Ռյոմեր եւ ընկերներ	Բուենոս Այրես	Գրասիելա Ս. Ռյոմեր graciela@romer.com.ar (+54-11) 4345-2864/5
Հայաստան	Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն	Երեւան	Ստեփան Սաֆարյան root@acnis.am (+374-10) 52 87 80
Ավստրալիա	Լովի ինստիտուտ / Շուկայի ֆոկուս ինքընրնեշնլ	Քրոուզ Նեստ Ավստրալիա	Իվան Քուք icook@lowyinstitute.org +61 2 8238 9120
Չինաստան	Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ / ԳլոբՍկան		Լոյդ Հեդերինգթոն lloyd.hetherington@globescan.com +1 416 962 0707
Ֆրանսիա	Արդյունավետություն 3	Ղեյմս	Հելեն Մաղտեն helen.m@efficience3.com +33 3 26 79 07 96
Հնդկաստան	Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ/ ԳլոբՍկան		Լոյդ Հեդերինգթոն lloyd.hetherington@globescan.com +1 416 962 0707
Ինդոնեզիա	Լովի ինստիտուտ / Շուկայի ֆոկուս ինքընրնեշնլ	Ջաքարթա	Իվան Քուք icook@lowyinstitute.org +61 2 8238 9120

Իրան	Համաշխարհային հասարակական կարծիք	Վաշինգթոն	Սթեֆեն Վեբեր sweber@pipa.org +1 202 232 7500
Իսրայել	Խաղաղության ուսումնասիրության Թամի Շթայնմեցի կենտրոն	Թել Ավիվ	Պրոֆեսոր Թամար Հերման tamarhe@gmail.com (+972-3) 6424298 / 6406762
Մեքսիկա	Տնտեսական հետազոտությունների եւ ուսուցման կենտրոն (ՏՀՈՒԿ) / Արտաքին հարաբերությունների մեքսիկական խորհուրդ (COMIEXI)	Մեքսիկա	Դոկտոր Սյուզան Մինուշկին Susan.minushkin@cide.edu +52-55-5727-9830
Պաղեստին	Հասարակական կարծիքի պաղեստինյան կենտրոն	Բեյթ Սահուր	Դոկտոր Նաբիլ Քուքալի kukali@p-ol.com (+972-2) 2774846
Պերու	Հասարակական կարծիքի խումբ	Լիմա	Լուիս Բենավենտե lbenaven@correo.ulima.edu.pe (+511) 437-6767
Ֆիլիպիններ	Սոցիալական եղանակի կայան	ք. Քուեզոն	Լինդա Գեռեռո guerrero@sws.org.ph (+632) 924-4465
Լեհաստան	CBOS	Վարշավա	Դոկտոր Քրզիշտոֆ Զագորսկի Dr. Krzysztof Zagorski k.zagorski@cbos.pl (+0-22) 693 47 25 / 693 46 93
Ռուսաստան	Լեվադա կենտրոն	Մոսկվա	Լյուդմիալ Խախուլինա lkhahul@levada.ru (+7 095) 229-55-44
Հարավային Կորեա	Արեւելյան Ասիայի ինստիտուտ / Հանքուքի հետազոտական ընկերություն	Սեուլ	Հան Վուլ Ջեոնգ hwjeong@eai.or.kr 02-2277-1683
Թաիլանդ	ABAC հարցախույզի հետազոտական կենտրոն	Բանգկոկ	Դոկտոր Նոփադոն Կաննիկա noppadonknn@au.edu +66-2-719-1550
Ուկրաինա	Կիեւի սոցիոլոգիայի միջազգային ինստիտուտ	Կիեւ	Վլադիմիր Իլյիչ Պանիոտո paniotto@kmis.kiev.ua (+38) 044 537-3376 / (+38) 044 501-7403
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Համաշխարհային հարցերով Չիկագոյի խորհուրդ / Իմացության ցանցեր	Մենլո Փարք	Դոկտոր Մայքլ Դենիս mdennis@knowledgenetworks.com +1-650-289-2160

Մեթոդաբանություն

Երկիր	Հարցվողների քանակը	Հարցման ժամանակաշրջանը	Հարցման մեթոդաբանությունը	Հարցման տեսակը
Արգենտինա	881	2-5 դեկտեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Քաղաքային[1]
Ավստրալիա	1007	19 հունիս-6 հուլիս 2006թ.	Հեռախոսային	Համապետական
Հայաստան	1300	Նոյեմբեր-դեկտեմբեր 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական
Չինաստան	1964	10-21 հուլիսի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[2]
Ֆրանսիա	800	27-30 մարտի 2007թ.	Հեռախոսային	Համապետական
Հնդկաստան	2458	9-27 հուլիսի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[3]
Ինդոնեզիա	1200	22 հունիս-6 հուլիս 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[4]
Իրան	1000	31 հոկտեմբեր-6 դեկտեմբեր 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական
Իսրայել	593	Նոյեմբեր 2006թ.	Հեռախոսային	Համապետական[5]
Մեքսիկա	1499	22-27 հուլիսի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական
Պաղեստին	1056	8-15 հոկտեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[6]
Պերու	578	17-18 նոյեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Քաղաքային[7]
Ֆիլիպիններ	1200	24 սեպտեմբեր-29 նոյեմբեր 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[8]
Լեհաստան	937	9-11 սեպտեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական
Ռուսաստան	1599	21-30 սեպտեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[9]
Հարավային Կորեա	1024	16 հունիս–7 հուլիս 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական
Թաիլանդ	1558	4-20 սեպտեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական[10]
Ուկրաինա	1003	8-14 սեպտեմբերի 2006թ.	Դեմ առ դեմ	Համապետական
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	1227	23 հունիս-9 հուլիս 2006թ.	Առ ցանց	Համապետական[11]

1. Արգենտինայում հարցախույզն անց է կացվել Բուենոս Այրես քաղաքում եւ հարակից տարածքի 24 դեպարտամենտներում (որոնք միասին կոչվում են Մեծ Բուենոս Այրես), Լա Պլատայում, Մար Դել Պլատայում, Մենդոզայում, Կորդոբայում, Ռոզարիոյում եւ Թուքումանում:
2. Չինաստանում 1964 հարցվողից բաղկացած ընտրանքով հարցմանը մասնակցել են եւ՛ քաղաքային, եւ՛ գյուղական բնակավայրերի ներկայացուցիչներ: Ոչ գրաճանաչ մոտավորապես 36 մարդ դուրս է մնացել հարցախույզից:
3. Հնդկաստանում դեմ առ դեմ համապետական հարցախույզի պատահական ընտրանքը բաղկացած է եղել 3132 հարցվողից, որից բացառվել են կրթություն չունեցողները կամ ոչ տառաճանաչները, եւ վերջնահաշվում հարցախույզին մասնակցել է 2458-ը:
4. Ինդոնեզիայում ընտրանքը ներառել է երկրի հիմնական կղզիները ներկայացնող 10 նահանգների քաղաքային, արվարձանային եւ գյուղական բնակավայրերի բնակչությանը:

5. Իսրայելում հարցախույզն անց է կացվել պատահական հեռախոսազանգերի միջոցով եւ այն չափահասների հետ, ովքեր օգտվում են վերգետնյա հեռախոսակապից: Այդ հեռախոսազրույցների 503-ն անց է կացվեց հրեական, իսկ 90-ը՝ արաբական թաղամասում:
6. Պաղեստինյան տարածքներում հարցախույզն անց է կացվել Հորդանան գետի արեւմտյան ափում՝ ներառյալ Արեւելյան Երուսաղեմը եւ Գազայի հատվածը:
7. Պերուում հարցախույզն անց է կացվել Լիմայի եւ Քայաոի 35 թաղամասերում՝ ներառյալ Լիման, Աթեն, Բառանկոն, Բրենիան, Քարաբայոն, Քորիոսը, Քոմասը, Ինդեփենդենսիան, Խեսուս Մարիան, Լա Մոլինան, Լա Վիկտորիան, Լինսեն, Լոս Օլիվոսը, Մագդալենան, Միրաֆլորեսը, Պուեբլո Լիբրեն, Պուենտե Պիեդրան, Ռիմաքը, Սան Բորխան, Սան Իսիդրոն, Սան Խուան Դե Լուրիգանչոն, Սան Խուան Միրաֆլորեսը, Սան Լուիսը, Սան Մարտին Դե Պոռեսը, Սան Միգելը, Սանտա Անիտան, Սանտիագո Դե Սուրկոն, Սուրկուիոն, Վիա էլ Սալվադորը, Վիա Մարիա Դել Տրիումֆոն, Բեյավիստան, Քայաոն, Կարմեն Դե Լա Լեգուան, Ռեյնոսոն, Լա Պեռլան եւ Վենտանիան:
8. Ֆիլիպիններում հարցումն անց է կացվել մետրոպոլիտան Մանիլայում, ինչպես նաեւ Լուզոն, Վիսայաս եւ Մինդանաո կղզիներում:
9. Ռուսաստանում հարցախույզն անց է կացվել դեմ առ դեմ համապետական պատահական հարցման ճանապարհով, որը, սակայն, չի ներառել ռազմական հակամարտության տարածքները (օրինակ՝ Չեչնիան), ինչպես նաեւ որոշ դժվարանցանելի տարածքներ. այդպիսի տարածքները միասին վերցրած կազմել են Ռուսաստանի բնակչության միայն 5%-ը:
10. Թաիլանդում հարցախույզն անց է կացվել երկրի 10 նահանգներում՝ ներառյալ Բանգկոկը, Սամուտպրակարնը, Պրաչուաբկիրիկան, Ռայոնգը, Չիանգ Մային, Կամպաենգպեթչը, Խոն Կաենը, Սակոննակորնը, Չուփորնը եւ Նակորն Սրի Թհամարաթը:
11. ԱՄՆ-ում հարցախույզն անց է կացվել Իմացության ցանցեր առցանցային պանելի համապետական ներկայացուցչական ընտրանքի հիման վրա: Այդ պանելը պատահականության սկզբունքով ընտրվում է երկրի՝ հեռախոս ունեցող տնային տնտեսություններից եւ, հետեւաբար, անհրաժեշտության դեպքում միացվում է առցանցին: